Ագրո-զբոսաշրջության որակի հավաստագրման համակարգ

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ ՝	Զբոսաշրջություն
Տևողություն ՝	24 ամիս
Իրականացման ժամանակահատված ՝	մայիս 2013 – մայիս 2015
Ընդհանուր բյուջե ՝	529,648 եվրո
ՀՀ շահառու հաստատություն՝	«Էկոտուրիզմի ասոցիացիա» ՀԿ
Մասնակից երկրներ՝	Բուլղարիա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Հունաստան, Ուկրաինա

Ծրագրի նկարագրություն

Ընդհանուր նպատակները ՝ Խթանել ագրո-տուրիզմը գործընկեր տարածաշրջաններում և բարելավել մատուցվող ծառայությունների որակը՝ բոլորի համար ընդհանուր յուրահատուկ որակի չափանիշի և հավաստագրման գործընթացի ներդրման միջոցով:

Ձեռք բերված արդյունքները ՝

- Բարելավվել է գործընկեր երկրներում ագրոտուրիզմի հատվածում մատուցվող ծառայությունների որակը՝ ստանդարտացման և հավաստագրման համակարգի ներդրման միջոցով,
- Հիմնվելով ընթացիկ իրավիճակի ուսումնասիրության և միջազգային մակարդակում առկա լավագույն փորձի վերլուծության արդյունքների վրա՝ ստեղծվել է ագրոտուրիզմի միասնական չափորոշիչների շրջանակ՝ հարմարեցված տեղական պայմաններին և յուրահատկություններին,
- Ձևավորվել է միասնական գնահատման և հավաստագրման գործընթաց, կազմավորվել է տեղական փորձագետների խումբ, որոնք կարող են աջակցել տեղական գործարարներին և կիրառել ողջ գործընթացը գործընկեր երկրներում,
- Ագրոտուրիզմի միասնական չափորոշիչների շրջանակը փորձնական եղանակով ներդրվել է ագրոտուրիզմի ձեռնարկություններում ծրագրի ողջ տարածքում և դրանից դուրս՝ որպես օրինակելի նմուշ,
- Ստեղծվել է CerTour հավաստագրման համակարգը՝ հետնախագծման շրջանում կայուն հիմքերով կառավարելու համար:

Հավելյալ տեղեկատվություն

Ագրո-զբոսաշրջության որակի հավաստագրման համակարգ (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-2634.pdf)